## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով համակարգչային սարքավորումների ձեռքբերման նպատակով ձևավորված « ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-ՀՍ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 11.04.2019թ. ժամը 15-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ.Մկրտչյանը, Լ.Հովհաննիսյանը,Մ.Անտոնյանը, Է.Արշակյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

**Օրակարգ**

**Հայտերի բացման և գնահատման մասին**

**1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները**

«ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-ՀՍ-19/1» ծածկագրով ընթացակարգին ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին: Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

**1. «Կոմպմարկետ» ՍՊԸ (ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 4-րդ թաղ. 2բ շենք, 45բն.)**
**2. «Կոմպասս» ՍՊԸ (ՀՀ, ք. Երևան, Չարենցի 66)**
**3. <<Վանդիստ>> ՍՊԸ (ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 13-5)**
**4. <<Ինո-Թեքնոլոջի>> ՍՊԸ(ՀՀ, ք. Երևան, Այգեստան 9փ. 41շ., բն. 24)**
**5. <<Նորմա-պլյուս>>ՍՊԸ(ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 2, տարածք 60)**
**6. <<Էյչ Գրուպ>>ՍՊԸ(ՀՀ, ք. Երևան, Բաշինջաղյան 1փ., 13 շ., բն. 30)**
**7. <<ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ>>ՍՊԸ (ք. Երևան, Ազատության 24)**

**2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին**

2.1. Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

**3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ**

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

### 4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և նախահաշվային գինը

| Հ/Հ | Անվանում | Քանակ | Նախահաշվային գին | Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | «Կոմպմարկետ» ՍՊԸ | <<Ինո-Թեքնոլոջի>> ՍՊԸ | <<Վանդիստ>> ՍՊԸ | «Կոմպասս» ՍՊԸ | <<Նորմա-պլյուս>> ՍՊԸ | <<Էյչ Գրուպ>>ՍՊԸ | <<ԻԱՅՍԻ ՏԵԼԵԿՈՄ>>ՍՊԸ |
| 1 | սեղանի համակարգիչներ | 54 | 11340000 | 9396000 | 9436500 | 9765000 | 10449000 | 10759230 | 10773000 | 11610000 |

### 5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

**Հանձնաժողովը որոշեց՝**

1. Ընթացակարգի **առաջին տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել **«Կոմպմարկետ» ՍՊԸ** –ին:
2. Ընթացակարգի **երկրորդ տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել **<<Ինո-Թեքնոլոջի>> ՍՊԸ** –ին:
3. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն փաստաթղթերի ստացումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, 15.00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

**Հանձնաժողովի քարտուղարին՝**

1. Համաձայն Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետերի՝ առաջին տեղեր զբաղեցրած մասնակցի վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ,
2. Համաձայն Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետերի՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ ____________ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ ________________ Վ.Մկրտչյան

________________ Լ.Հովհաննիսյան

________________ Մ.Անտոնյան

________________ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ________________ Մ.Մուրադյան